



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՄ

«20» հունիսի 2017թ.

ք. Երևան

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

Նախագահող դատավոր	Մ. Պապոյան
դատական նիստերի քարտուղար	Ա. Զուլհալյան
դատախազ	Ն. Խաչատրյան
քննիչ	Պ. Աղաբաբյան
Դ. Ստեփանյանի ներկայացուցիչներ	Մ. Պողոսյան
	Ա. Սուքիասյան
Հ. Երիցյանի ներկայացուցիչ	Գ. Մարգարյան

դռնբաց դատական նիստում քննության առնելով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան) 2017 թվականի մարտի 14-ի որոշման դեմ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ն. Խաչատրյանի վերաքննիչ բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

Գործի դատավարական նախապատմությունը.

2016 թվականի մայիսի 6-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի հետաքննիչ Հ. Ներսիսյանի որոշմամբ Դավիդ Ստեփանյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է և Հովհաննես Երիցյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ վերջինի գործողություններում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

2016 թվականի հունիսի 1-ին Երևան քաղաքի դատախազ Ա. Դավթյանի որոշմամբ Դավիդ Ստեփանյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով՝ Հովհաննես Երիցյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի բացակայության մասով քրեական գործի հարուցելը մերժելու մասին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի հետաքննիչ Հ. Ներսիսյանի 2016 թվականի մայիսի 6-ի որոշման դեմ Դավիդ Ստեփանյանի ներկայացուցիչ Մարինա Պապոսյանի բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու հիմքով: Հովհաննես Երիցյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի



137-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի բացակայության մասով քրեական գործի հարուցումը մերժելու մասին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի հետաքննիչ Հ.Ներսիսյանի 2016 թվականի մայիսի 6-ի որոշումը վերացվել և ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 63203516 քրեական գործը:

2016 թվականի սեպտեմբերի 6-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Պ.Աղաբաբյանի որոշմամբ թիվ 63203516 քրեական գործն ընդունվել է վարույթ:

2016 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Պ.Աղաբաբյանի որոշմամբ թիվ 63203516 քրեական գործով վարույթը կարճվել և Հովհաննես Երիցյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում չի իրականացվել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

2016 թվականի դեկտեմբերի 1-ին Երևան քաղաքի դատախազ Բ.Ասլանյանի որոշմամբ թիվ 63203516 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Պ.Աղաբաբյանի 2016 թվականի նոյեմբերի 10-ի որոշման դեմ Դավիդ Ստեփանյանի ներկայացուցիչ Մարինա Պողոսյանի կողմից ներկայացված բողոքը մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

2017 թվականի հունվարի 9-ին Դավիդ Ստեփանյանի ներկայացուցիչ Մարինա Պողոսյանը բողոք է ներկայացրել Առաջին աստիճանի դատարան՝ խնդրելով վերացնել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Պ.Աղաբաբյանի 2016 թվականի նոյեմբերի 10-ի և Երևան քաղաքի դատախազ Բ.Ասլանյանի 2016 թվականի դեկտեմբերի 1-ի որոշումները և որոշում կայացնել Դավիդ Ստեփանյանի իրավունքների ու ազատությունների խախտումը վերացնելու մասին:

2017 թվականի մարտի 14-ին Առաջին աստիճանի դատարանի որոշմամբ Դավիդ Ստեփանյանի ներկայացուցիչ Մարինա Պողոսյանի բողոքը բավարարվել է՝ պարտավորեցնելով վարույթն իրականացնող մարմնին վերացնելու ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Պ.Աղաբաբյանի քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2016 թվականի նոյեմբերի 10-ի և Երևան քաղաքի դատախազ Բ.Ասլանյանի 2016 թվականի դեկտեմբերի 1-ի բողոքը մերժելու մասին որոշումներով թույլ տրված Դավիդ Ստեփանյանի իրավունքների խախտումը:

Վերը նշված որոշման օրինակը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազություն է ստացվել 2017 թվականի մարտի 22-ին:

2017 թվականի մարտի 31-ին Վերաքննիչ դատարան է ստացվել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ն.Խաչատրյանի վերաքննիչ բողոքը՝ Առաջին աստիճանի դատարանի 2017 թվականի մարտի 14-ի որոշման դեմ, իսկ վերաքննիչ բողոքի վերաբերյալ կողմերը ստացվել են 2017 թվականի ապրիլի 5-ին:



Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ն.Խաչատրյանը խնդրել է ամբողջությամբ բեկանել Առաջին աստիճանի դատարանի կողմից 2017 թվականի մարտի 14-ին թիվ ԵԿԴ/0002/11/17 գործով կայացված որոշումը և որոշում կայացնել Դավիդ Ստեփանյանի ներկայացուցիչ Մարինա Պողոսյանի բողոքը մերժելու մասին:

Ներկայացված վերաքննիչ բողոքում մասնավորապես նշված է, որ Առաջին աստիճանի դատարանը թույլ է տվել դատական սխալ, այն է՝ առկա է քրեադատավարական օրենքի խախտում, չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ, 17-րդ, 104-105-րդ, 124-127-րդ և 278-րդ հոդվածների պահանջները, որպիսի պայմաններում Առաջին աստիճանի դատարանը կայացրել է չհիմնավորված որոշում, ուստի դատական ակտը ենթակա է բեկանման: Քրեական գործի ուսումնասիրությամբ Առաջին աստիճանի դատարանը հաստատված է համարել այն փաստը, որ դեռևս 2016 թվականի հոկտեմբերի 28-ին «Վելես» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ Մարինա Պողոսյանի կողմից վարույթն իրականացնող մարմին է ներկայացվել միջնորդություն, որով վերջինը խնդրել է պարզել, թե ում է պատկանել Հովհաննես Երիցյանի կողմից եկամուտ ստանալու նպատակով Դավիդ Ստեփանյանին տոկոսով տրված գումարի մի մասը, արդյոք Հովհաննես Երիցյանը և գործով հիշատակված ոմն գեներալ Դավիդ Ստեփանյանին տոկոսագումարների դիմաց տրված գումարները ձեռք են բերել կամ վաստակել օրենքով սահմանված կարգով և օրենքով թույլատրելի աղբյուրներից, թե ոչ: Բացի այդ, խնդրել է պարզել Հովհաննես Երիցյանի գումարների ՀՀ մուտք գործելու եղանակը, դրանց իրական պատկանելիությունը, քանի որ ունեցել է հիմնավոր կասկածներ, որ նման գումարները Հովհաննես Երիցյանի կողմից ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, դրանց մի մասը պատկանում են այլ պաշտոնատար անձանց, որն էլ իրենից կարող է ներկայացնել կոռուպցիայի հետևանքով ձեռք բերված փողերի լվացման սխեմա: Առաջին աստիճանի դատարանը ընդգծել է, որ տվյալ միջնորդության կապակցությամբ վարույթն իրականացնող մարմինը 2016 թվականի նոյեմբերի 9-ին կայացրել է որոշում՝ տուժողի ներկայացուցչի միջնորդությունը մերժելու մասին: Անդրադառնալով վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված որոշմանը՝ Առաջին աստիճանի դատարանը փաստել է, որ քրեական գործի նախաքննության ընթացքում հարուցված միջնորդության կապակցությամբ վարույթն իրականացնող մարմինը չի կատարել գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, որի կապակցությամբ կարող էր կայացվել պատճառաբանված որոշում: Նախաքննական մարմինը, ունենալով երկու տարբեր անձանց ցուցմունքներ, որոնք վերաբերելի են միևնույն փաստի, գումարներ վերադարձնելուն, այդ ուղղությամբ պատշաճ քննություն չի իրականացրել և վեր չի հանել պարզաբանման ենթակա մի շարք հանգամանքեր: Հարկ է նկատել, որ տուժողի ներկայացուցիչ Մարինա Պողոսյանի կողմից ինչպես թիվ 63203516 քրեական գործի նախաքննության ընթացքում ներկայացված միջնորդությամբ, այնպես էլ բողոքի դատական ստուգման ընթացքում Հովհաննես Երիցյանի կամ այլ անձի կողմից սկզբնական հանցավոր արարք կատարելու, դրանից գույք ստանալու, ապա այդ գույքն օրինականացնելու վերաբերյալ որևէ փաստական տվյալ չի նշվել և առհասարակ թիվ 63203516 քրեական գործի նախաքննության ընթացքում այդպիսիք ձեռք չեն բերվել, և Առաջին աստիճանի դատարանի հետևությունները հիմնված են բացառապես Մարինա Պողոսյանի չփաստարկված ենթադրությունների վրա: Ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից Մարինա Պողոսյանի քրեական գործի նախաքննության ընթացքում հայտնած, չփաստարկված ենթադրությունները չեն



կարող քննության առարկա հանդիսանալ, քանի որ այդպիսի ենթադրությունները պայմանավորված են եղել բացառապես փոխառությամբ տրված գումարների չափով և ոչ ավելին: Ինչ վերաբերում է Առաջին աստիճանի դատարանի՝ Հովհաննես Երիցյանի կողմից ենթադրաբար կատարված արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով սահմանված հանցակազմի հատկանիշների առկայության կամ բացակայություն մասին քննությունն չկատարելու մասով նկատառումներին, ապա հարկ է նկատել, որ տվյալ դեպքում Հովհաննես Երիցյանը չի կարող հանդիսանալ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ, հետևաբար նաև վերջինի գործողությունները չեն կարող քննարկվել նշված հանցագործության շրջանակներում, ուստի Առաջին աստիճանի դատարանի եզրահանգումները հիմնավոր չեն: Չնայած այն հանգամանքին, որ Հովհաննես Երիցյանը չի կարող հանդիսանալ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ, և հետևաբար նաև վերջինի արարքը չի կարող քննարկվել հիշյալ հոդվածի շրջանակներում, այնուամենայնիվ, հարկ է անդրադառնալ նաև այդ նկատառումներին, քանի որ հիմնավորված չեն նաև Առաջին աստիճանի դատարանի համար հիմք հանդիսացած և քրեական գործի նյութերում առկա տվյալների ուսումնասիրության արդյունքում այդպիսի եզրահանգման համար Առաջին աստիճանի դատարանի հետևությունները, այլ կերպ ասած՝ Առաջին աստիճանի դատարանի կողմից պատշաճ ուսումնասիրության չեն ենթարկվել նաև անհրաժեշտ նյութերը, մասնավորապես՝ Հովհաննես Երիցյանի ցուցմունքները, քրեական գործի նյութերում առկա մի շարք փաստաթղթեր, հակառակ դեպքում, եթե Առաջին աստիճանի դատարանի կողմից նշված տվյալները քննարկվեին դրանց համակցության մեջ, ապա Առաջին աստիճանի դատարանը չէր հանգի չհիմնավորված հետևությունների: Արդեն հաստատված է այն փաստը, որ Հովհաննես Երիցյանը Դավիդ Ստեփանյանին և Գայանե Ստեփանյանին գումարները տվել է փոխառությամբ և առանց տոկոսի, և նման պարագայում Առաջին աստիճանի դատարանի հետևությունները, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից այդ ուղղությամբ պատշաճ քննություն չի իրականացվել և վեր չի հանվել պարզաբանման ենթակա մի շարք հանգամանքներ (մասնավորապես՝ վարույթն իրականացնող մարմինը գործի քննության մինչդատական վարույթում չի ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ պարզելու Դավիդ Ստեփանյանն ամսական կամ տարեկան որպես տոկոս որքան գումար է վերադարձրել Հովհաննես Երիցյանին, արդյոք Հովհաննես Երիցյանի կողմից Դավիդ Ստեփանյանին ամսական 1-2 տոկոս տոկոսադրույքի դիմաց տրված գումարներից վճարված տոկոսի գումարները հանդիսացել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված համապարտադիր և անհատույց վճար հանդիսանալու պարագայում արդյոք Հովհաննես Երիցյանը հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում վճարել է Դավիդ Ստեփանյանի կողմից իրեն վճարված տոկոսների գումարների եկամտից կամ շահույթից գանձման ենթակա, օրենքով սահմանված հարկերը, թե ոչ), չեն բխում թիվ 63203516 քրեական գործի նյութերից և պատահական չէ, որ Առաջին աստիճանի դատարանի կողմից չեն արձանագրվել հստակ տեղեկություններ, այլ միայն արձանագրվել են ենթադրյալ փաստական տվյալների ձեռք բերման հնարավոր տարբերակներ (վարկածներ), ինչը հիմնավորված չէ, այսինքն՝ կարելի է փաստել, որ Առաջին աստիճանի դատարանի կողմից այս մասով ևս հստակ խախտումներ չեն արձանագրվել: Բացի այդ, Առաջին աստիճանի դատարանի կողմից սխալ են մեկնաբանվել Հովհաննես Երիցյանի կողմից վերջինի հարցաքննությամբ հայտնված տեղեկությունները և նրա նշած 1-2 տոկոսի պայմանավորվածությունը, ըստ էության, մեկնաբանվել է որպես Հովհաննես Երիցյանի և Դավիդ Ստեփանյանի միջև կնքված փոխառության պայմանագրի անխթանական



տոկոսներ, այն դեպքում, երբ Հովհաննես Երիցյանը նշել է, որ 1-2 տոկոսի չափով Դավիդ Ստեփանյանն իրեն գումար էր տալու Հովհաննես Երիցյանից փոխառությամբ վերցրած գումարները ձեռնարկատիրական գործունեության մեջ ներդնելու և դրանից շահույթ ստանալու դեպքում, այսինքն՝ տվյալ դեպքում անվիճելի է այն փաստը, որ գումարները փոխառությամբ հանձնվել են առանց տոկոսի: Բացի այդ, անհասկանալի է, թե ինչ պատճառաբանությամբ է Առաջին ատյանի դատարանը համոզմունք ձևավորել առ այն, որ դիմողի կողմից նշված 18.000 ԱՄՆ դոլարին համապատասխանում է Հովհաննես Երիցյանի կողմից նշված 1-2 տոկոսի չափով գումարը, այն դեպքում, երբ Հովհաննես Երիցյանը հստակ նշել է, որ առաջին անգամ Դավիդ Ստեփանյանին տվել է տվել է 200.000 ԱՄՆ դոլար, այսինքն՝ քննարկվող 360.000.000 ՀՀ դրամը Դավիդ Ստեփանյանին տրամադրվել է մաս-մաս և տարբեր ժամանակահատվածներում: Բացի այդ, Հովհաննես Երիցյանը նշել է, որ մինչև 2010 թվականը Դավիդ Ստեփանյանը պարբերաբար՝ տարվա ընթացքում 2-3 ամիս, իրեն վերադարձրել է տարբեր չափի գումարներ՝ նույն պայմաններով: Այսինքն՝ Հովհաննես Երիցյանի կողմից հստակ գումարի չափ և պարբերականություն չի նշվել և տվյալ դեպքում Առաջին ատյանի դատարանն ինչ հիմնավորմամբ է համոզմունք ձևավորել, որ նշված 1-2 տոկոսը համընկնում է դիմողի կողմից նշված ամսական 18.000 ԱՄՆ դոլարին: Միաժամանակ, հարկ է նաև նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցագործության քննարկման համար նախ անհրաժեշտ է հիմնավորված համարել այն փաստը, որ Հովհաննես Երիցյանը փոխառությամբ ստացված գումարներից ուղղակիորեն ստացել է եկամուտ, որը կարող էր հանդիսանալ հարկման հիմք, մինչև նույն ժամանակ, հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ դեռևս 2015 թվականի հուլիսի 2-ին և 2015 թվականի հոկտեմբերի 14-ի դատական ակտերով արդեն իսկ հաստատված է համարվել այն փաստը, որ Հովհաննես Երիցյանի կողմից Դավիդ Ստեփանյանին և Գայանե Ստեփանյանին փոխառությամբ գումարները տրվել են առանց տոկոսի, և նման պարագայում ներգործության քրեաիրավական և քրեադատավարական միջոցները չպետք է այնպիսի լինեն, որ խաթարեն քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական հարաբերությունների տրամաբանությունը, անորոշություն և անկանխատեսելիություն ստեղծեն քաղաքացիաիրավական շրջանառության մեջ: Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի այն հետևությանը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական գործի քննության շրջանակներում իրականացված գործողությունները ևս չեն կարող համարվել բավարար և սպառիչ, քանի որ չի պարզվել այդ հանցակազմի հետ Հովհաննես Երիցյանի հնարավոր առնչություն ունենալու և դրան վերջնական իրավական գնահատական տալու համար մի կարևոր հանգամանք ևս. ինչու է ի վերջո Դավիդ Ստեփանյանը ընտանիքով լքել ՀՀ-ն և արդյոք նրա՝ Հայաստանից հեռանալն իրականում որևէ կապ ունի Հովհաննես Երիցյանի նկատմամբ նրա ունեցած պարտավորությունների և դրա արդյունքում նրանց միջև առաջացած լարված փոխհարաբերությունների հետ, ապա հարկ է նկատել, որ այդ կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0252/01/13 գործով ապացույցների բավարարության, վերաբերելիության վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշումներ: Թիվ 63203516 քրեական գործի նախաքննության ընթացքում կատարված քննչական և դատավարական այլ գործողությունների արդյունքում ձեռք բերված տվյալները բավարար են եղել Հովհաննես Երիցյանի գործողություններին իրավական գնահատական տալու, առհասարակ վերջնական և պատճառաբանված դատավարական որոշում կայացնելու համար, ուստի Առաջին ատյանի դատարանի



կողմից արձանագրված նկատառումն ինքնանպատակ է և անհիմն: Բացի այդ, հարկ է նկատել, որ Առաջին ատյանի դատարանի կողմից ձևականորեն արձանագրվել է, որ նախաքննական մարմինը մինչդատական վարույթի ընթացքում չի կատարել գործի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն՝ խախտելով Դավիդ Ստեփանյանի իրավունքներն ու օրինական շահերը, սակայն Առաջին ատյանի դատարանի կողմից հստակ որևէ խախտում չի արձանագրվել, չի արձանագրվել նաև, թե Դավիդ Ստեփանյանի իրավունքներն ու շահերը վարույթն իրականացնող մարմնի ինչպիսի գործողության, անգործության հետևանքով են խախտվել և առհասարակ, վերջինի որ իրավունքներն ու օրինական շահերն են խախտվել և ինչպես:

Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատնական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վերաքննիչ դատարանը, բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում դատական ասուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը, լսելով դատախազի հիմնավորումները՝ վերաքննիչ բողոքի կապակցությամբ, դիմողի ներկայացուցիչների պատասխանները՝ վերաքննիչ բողոքի դեմ, ինչպես նաև ուսումնասիրելով ներկայացված վերաքննիչ բողոքը և ներկայացված նյութերը, գտնում է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ն.Խաչատրյանի վերաքննիչ բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում տուժողի, նրա ներկայացուցչի, ինչպես նաև այն ֆիզիկական անձի, ում հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, կարող է բողոքարկվել վերադաս դատախազին, իսկ գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

1. հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և էթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումները ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական



հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

3. բողոքը կարող է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան՝ այն մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չի ստացվել, բողոք ներկայացնելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում:

4. բողոքը դատավորի կողմից միանձնյա քննվում է այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում՝ այդ մասին տեղյակ պահելով դիմողին և վարույթն իրականացնող մարմնին: Դիմողի կամ վարույթն իրականացնող մարմնի չներկայանալը չի խոչընդոտում բողոքը քննելուն, սակայն դատավորը կարող է պարտադիր համարել նշված անձանց ներկայությունը: Վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատարան ներկայացնել բողոքի վերաբերյալ նյութեր: Վարույթն իրականացնող մարմինը և դիմողը բացատրություններ տալու իրավունք ունեն:

5. բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: Դատավորի որոշման պատճենն ուղարկվում է դիմողին և վարույթն իրականացնող մարմնին:

Տվյալ դեպքում Առաջին աստիճանի դատարանը մասնավորապես եկել է այն եզրահանգման, որ այն պայմաններում, երբ քրեական գործը քննվել է սպանության սպառնալիքի փաստը բացահայտելու հանգամանքի առթիվ, քրեական վարույթն իրականացնող մարմինը՝ քննիչը, բավարար միջոցներ չի ձեռնարկել նույն քրեական գործի շրջանակներում ի հայտ եկած, իրենց մեջ ենթադրյալ հանցագործության, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ և 205-րդ հոդվածներով սահմանված հանցակազմերի հատկանիշներ պարունակող փաստերն ու տվյալները պատշաճ ստուգման, իսկ դրանց արդյունքում միայն՝ հերքելու ուղղությամբ:

Բացի այդ, Առաջին աստիճանի դատարանը, վերլուծելով վարույթն իրականացնող մարմնի և գործի նկատմամբ դատավարական հսկողություն իրականացնող, իսկ այնուհետև՝ դատարանում բողոքաբերի փաստարկների կապակցությամբ ներկայացված դատախազի դիրքորոշումները, հանգել է այն հետևության, որ վերջինները, ըստ էության, քննելով ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական գործ, իսկ դրա արդյունքում ստուգելով կայացված որոշման օրինականությունը, ձեռնամուխ չեն եղել մի շարք հանգամանքների բացահայտմանը, որոնց վերաբերյալ համապատասխան միջնորդություններ են ներկայացվել բողոքաբերների կողմից:

Ավելին, նույն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական գործի քննության շրջանակներում իրականացված գործողությունները ևս չեն կարող համարվել բավարար և սպառիչ, քանի որ չի պարզվել այդ հանցակազմի հետ Հովհաննես Երիցյանի հնարավոր առնչություն ունենալու և դրան վերջնական իրավական գնահատական տալու համար մի կարևոր հանգամանք ևս. ինչու է ի վերջո Դավիդ Ստեփանյանն ընտանիքով լքել ՀՀ-ն և արդյոք նրա՝ Հայաստանից հեռանալն իրականում որևէ կապ ունի Հովհաննես Երիցյանի նկատմամբ նրա ունեցած պարտավորությունների և դրա արդյունքում նրանց միջև առաջացած լարված փոխհարաբերությունների հետ:



Այսինքն՝ Առաջին ատյանի դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ նախաքննական մարմինը մինչդատական վարույթի ընթացքում չի կատարել գործի լրիվ օբյեկտիվ և բազմակողմանի քննություն՝ խախտելով Դավիդ Ստեփանյանի իրավունքներն ու օրինական շահերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդված 3-րդ մասի համաձայն՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար (...):

Վերաքննիչ դատարանի համար նույնպես ընդունելի է Առաջին ատյանի դատարանի վերոգրյալ մտտեցումը, քանի որ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն ձեռնարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, որպիսի պայմաններում խախտվել են Դավիդ Ստեփանյանի իրավունքները, իսկ Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ արձանագրված քննչական և դատավարական գործողություններ կատարելու մասին հետևությունները սույն գործի լուծման համար ունեն ելակետային նշանակություն:

Վերաքննիչ դատարանի վերոգրյալ եզրահանգումը պայմանավորված է մասնավորապես այն հանգամանքով, որ Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ նշված հանգամանքերի ստուգումը և պարզումը գտնվում է Դավիդ Ստեփանյանի իրավաչափ շահերի շրջանակներում, իսկ մինչև քրեական գործով վարույթը կարճելը էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ չհստակեցնելը հանգեցնում է Դավիդ Ստեփանյանի իրավունքների խախտման, ինչն անթույլատրելի է:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերոգրյալ եզրահանգումների պայմաններում անհիմն է նախաքննական մարմնի այն պատճառաբանությունը, որ կատարված նախաքննությամբ պատշաճ իրավական ընթացակարգով բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել այն մասին, որ Հովհաննես Երիցյանը Դավիդ Ստեփանյանի հասցեին տվել է սպանության սպառնալիքներ և սպառվել են այդ ուղղությամբ նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

Հարկ է նկատել, որ ապացույցների բավարարությունը որոշելու հարցին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի վերաբերյալ գործով իր 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշմամբ: Մասնավորապես՝ իրացնելով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական գործառույթը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հիշատակված դատական ակտում նախադեպային նշանակության իրավական դիրքորոշումներ է արտահայտել առ այն, որ. «(...) Գործի լուծման համար բավարար ապացույցներ ասելով՝ պետք է հասկանալ թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցություն, որը, հաղթահարելով անմեղության կանխավարկածը, անաչառ դիտորդի մոտ կձևավորի հիմնավոր կասկածից վեր համոզվածություն անձի մեղավորության վերաբերյալ, ինչպես նաև կհաստատի գործով ապացուցման առարկան կազմող մյուս հանգամանքները և հնարավորություն կտա կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում:

(...) Ապացույցների բավարարությունը չի կարող որոշվել թվաբանական ցուցանիշով: Ակնհայտ է, որ ապացույցները բավարար չեն, եթե

1) գործում բացակայում է որևէ ապացույց գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզման համար,



2) եղած ապացույցը թույլ չի տալիս պարզել այդ հանգամանքը անհրաժեշտ խորությամբ և լրիվությամբ,

3) այդ հանգամանքի ապացուցվածությունը կասկած է հարուցում (...):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում, «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով, պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած (...):»:

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանն իր վերը նշված՝ 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման մեջ, վերլուծելով ապացույցների արժանահավատության հատկանիշը, արտահայտել է հետևյալ դիրքորոշումը՝

«(...) Ապացույցի արժանահավատության հատկանիշը նույնպես վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Արժանահավատ է այն ապացույցը, որի ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Ապացույցն արժանահավատության տեսանկյունից գնահատելիս դատարանը պետք է հիմք ընդունի հետևյալ հանգամանքները.

ա) ապացույցի աղբյուրի հատկանիշները (օրինակ՝ փորձագետի ձեռնհասությունը, ցուցմունք տվող անձի շահագրգռվածությունը, որոշ դեպքերում հոգեբանական և ֆիզիոլոգիական հատկանիշները, վիճակը, ինչպես նաև անձին վերաբերող այլ հատկանիշներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ այդ անձի կողմից գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն ընկալելու, մտապահելու, վերարտադրելու գործընթացի վրա),

բ) ապացույցի ձևավորման հանգամանքները (օրինակ՝ վկայի կողմից կոնկրետ հանգամանքն ընկալելու պայմանները, պաշտպանի, ներկայացուցչի ներկայությունը և այլն),

գ) ապացուցողական տեղեկությունը ձեռք բերելու միջոցը,

դ) ապացույցի բովանդակությունը կազմող տեղեկությունը հաստատող կամ հերքող հանգամանքների առկայությունը,

ե) նույն տեղեկության ստացումն այլ աղբյուրից:

Յուրաքանչյուր ապացույց արժանահավատության տեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության մեջ՝ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների ստացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից ստացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել ստացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը փակասության դեպքում՝ դրա պատճառները:



Ապացույցի արժանահավատության վերաբերյալ դատարանի եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական տվյալների վրա (...):»:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, մասնավորապես՝ այն, որ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն ձեռնարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, որպիսի պայմաններում խախտվել են Դավիդ Ստեփանյանի իրավունքները, ինչպես նաև Առաջին ատյանի դատարանի որոշման մեջ արձանագրված քննչական և դատավարական գործողություններ կատարելու մասին հետևությունները սույն գործի լուծման համար ունեն ելակետային նշանակություն, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ն.Խաչատրյանի վերաքննիչ բողոքը պետք է մերժել, իսկ Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի մարտի 14-ի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ, 387-րդ, 394-րդ և 412-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ն.Խաչատրյանի վերաքննիչ բողոքը մերժել՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի մարտի 14-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան՝ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ



Մ.ՊԱՊՈՅԱՆ